

ՆՐԵՍՈՒՆԱԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. հիւ տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում տպագրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Մ. Կապուխէ. Тифлисъ, Редакция «Мелкъ»
Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

Թարգմանութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(շաբթի կիրակի և առաւօրեայ).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
թւ. օգնականներ տողատեղին 10 կոպեկով.
Տ է լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տիֆլիսի Վառլամէ Թարխանեան իր որդոց հետ, խորին վշտով համակված՝ յայտնում են ծանօթներին և ազգականներին, առաջինը՝ իր թանգագին ամուսնու, իսկ երկրորդը՝ իրանց սիրեցեալ հօր

ԱՂԻՔԱՆԻԻ ԹԱՐԻԱՆԵԱՆԻ

Եղբրական մահը, որ տեղի ունեցաւ Բաթումում, յուլիսի 29-ին, Հոգեհանգիստը կը կատարվի շաբաթ, օգոստոսի 2-ին, երեկոյեան 7 ժամին Վանաջ մայր եկեղեցում, իսկ յուզարկաւորութիւնը նոյն եկեղեցուց դէպի Խոջիվանքի գերեզմանատուն—կիրակի, օգոստոսի 3-ին, առաւօտեան 10½ ժամին:

ԲԱՂԱՆԴԱՌԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—Ներքին Տեղի-
Թիւն. Գ. Գրէնի դասախոսութիւնը. Հրդեհներ
և ֆոնտաններ նաւթահանքերում. Մատենախո-
սութիւն. Նամակ Վաղարշապատից. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արաքսի լուրեր.—ԽԱՌԻ ԼՈՒ-
ՐԵՐ.—Մանրանկար. Հեռանկարներ.—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Նա-
մակ Վենետիկէն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հոս Թի շուրջը կատարվող եղելութիւն-
ները մասն իրանց սովորական շա-ղի մէջ
և եթէ կայ մի հանգամանք, որ առան-
ձին խօսակցութեան առարկայ է հանդի-
սանում, դա այն է, որ նորընտիր Պիոս
X պապը իրան համար պետական-խոր-
հրդական նշանակեց նոր մարդու՝ կարդի-
նալ Ֆերրարային, որի պաշտօնը նախորդ
պապի օրով կատարում էր Բամպոլայն:
Այդ պաշտօնը կարեւոր պաշտօն է և Բամ-
պոլայն կարողացաւ իր ժամանակ ազդե-
ցիկ գերբ ձեռք բերել թէ Լեոն XIII պա-
պի հայեացքների լաւ արտայայտողը ի-
նեով, թէ իր կողմից մեծ հմտութեամբ
վարելով պապական գիւնատան վերաբե-
րեալ գործերը և համապատասխան կեր-
պով ընթացք տալով հարցերին:

Ո՞վ է և ի՞նչ է Բամպոլային փոխա-
րինող կարդինալ Ֆերրարայն: Նրա մասին
առ ալիւմ յայտնի է, որ նա ընդհանուր
առմամբ հետեւող է Բամպոլային ուղղու-
թեան, որ նա ունի քաղաքագիտական մեծ
փորձառութիւն և ընդունակ ու աշխա-

տասէր մարդ է: Նա զանազան ժամանակ-
ներ յատուկ յանձնարարութիւններով եղել
է եւրոպական մայրաքաղաքներում և ցոյց
է տուել հմտութիւն վարելու բանակցու-
թիւններ և աջակցութեամբ գլուխ բերե-
լու ծանր յանձնարարութիւններ: Նա հա-
մեմատարար դեռ առողջ մարդ է, 55
տարեկան, մի հասակ, որ կարգինալական
չըլանում շատ երիտասարդական է հա-
մարվում:

Քաղաքական աշխարհի ուղարու-
թիւնը նորից դարձած է դէպի Մա-
կեդոնիա: Այն դէպքերը, որ տեղի ունե-
ցան այստեղ վերջին օրերում, ցոյց են
տալիս, որ եւրոպական պէտք է մի շարք
բարդութիւնների և կնճիռների ախտա-
տես լինի, նախ քան կարող լինի մնայուն
խաղաղութիւն հաստատելու յուզված
երկրի մէջ:

Մակեդոնական յեղափոխական խմբի
գործունէութեան վերսկսումը և ուսա-
կան հիւպատոս Բոստիօֆուս սպանվելը
շատ սուր կերպարանք տուին մակեդոնա-
կան գործերին: Յերախորակալ խմբերը,
կամ ինչպէս մակեդոնացիները նրանց ա-
նունում են, չեն երբ միանալից շար-
ժում սկսեցին զանազան տեղերում և
գործադրութեան մէջ գրին կուլուր բո-
լոր միջոցները և սուր, և հրացան, և
պայթեցնող միջոցներ, և հրդեհներ և
երկաշիւղակալ գծերի խանգարում, մի
խօսքով ամեն մի հնարաւոր միջոց, որ
կարող է քայքայում և սարսափ առա-
ջանքը:

Ոչ դե չէ կարող ասել, թէ արդեօք
մակեդոնական ներկայ շարժումը կը սահ-

մանալակի եղած դէպքերով, թէ նա
պէտք է ընդարձակ ծաւալ ստանայ: Հիմը
կայ ենթադրելու, որ առաջիկայ շաբաթ-
ներում չետերը պէտք է յուսահատական
թիւններ առաջ բերելու և սարսափ տա-
լաճելու յուզված երկրի բոլոր մասերում:
Մանաւանդ մեծ երկիւղ կայ Սալոնիկի
վերաբերութեամբ, ուր կենտրոնացած են
հասարակական և առեւտրական հաստա-
տութիւններ:

Հիւպատոս Բոստիօֆուս սպանութեան
առիթով թիւրքաց կառավարութիւնը
շտապեց յայտնել ուսաց կառավարու-
թեան իր մեծ ցար, բայց փաստը մնում
փաստ. Թիւրքիան չէ կարողանում զսպել
իր զինուորներին և չէ կարողանում ապա-
հովել օտար պետութիւնների ներկայա-
ցուցիչների փախուցներից: Այդ հանգա-
մանը շատ ծանր ապարդիւթեան է
թողնում եւրոպական հասարակական կար-
ծիքի վրա: Աւելացրէք դրան և այն, որ
ուսական և աւստրիական հիւպատոս-
ները նորերն կատարած իրանց ճանա-
պարհորդութեան ժամանակ Մակեդոնիա-
յում համոզվեցին, որ Թիւրքիայի տեղա-
կան վարչութիւնները թոյլ են տուել ի-
րանց մի շարք բռնութիւններ ու զազա-
նութիւններ, որոնցով յուսահատութեան
մէջ են գցել մակեդոնական ժողովուրդը:

Չը նայելով այդ բոլորին, եւրոպական
պետութիւնները ամեն ջանք պէտք է
գործ դնեն թոյլ չը տալու, որ պատե-
րազմ ծագէ և Բալկանեան թերակղզու
վրա քաղաքական փոփոխութիւններ ա-
ռաջանան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գ. ԳՐԵՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆԸ

Օգոստոսի 1-ի երեկոյեան կայացաւ պ. Գրէ-
նի դասախոսութիւնը Հայաստանի անցեալի
և առանձնապէս Շահ-Աբասի ժամանակի գաղ-
թականութեան մասին:

Դասախոսը խօսելով հայ ազգի ծագման
մասին, կարծիք յայտնեց, թէ հայերը սերվել
են հաթթի երկրից, որոնք բնակվում էին Կիլի-
կիայի կողմերը, և այստեղից հեռացնուէ տա-

րածվելով գրաւել են Վասպուրականը և Արա-
րատեան դաշտը և հաստատել են հայկական
իշխանութիւնը: Գրիտոնէութիւնը հիմնել է
Տրդատը, որը, պ. դասախոսի կարծիքով, խոս-
րովի որդին չէ, այլ մի օտար անձնաւորու-
թիւն, որին հռոմէական կայսրը նշանակել է
թագաւոր Հայաստանի և Վրաստանի վրա,
որպէս զի թոյլ չը տայ պարսիկներին ամբող-
ջապէս գրաւել այդ երկրները:

Տրդատ ծանօթ էր քրիստոնէութեան հետ
դեռ ևս Հռոմում եղած ժամանակ և այս նոր
կրօնը մտցնելու նպատակն էր Հայաստանը
բոլորովին անշատել Գարսիառաւոյից և մի և
նոյն ժամանակ զօրացնել ու կենտրոնացնել ար-
քայական իշխանութիւնը: Տրդատի գաղափա-
րակիցը և աշակիցն էր Կեսարացի Գրիգորը,
որ եռանդով տարածում էր քրիստոնէութիւնը
Հայաստանում: Տրդատ սպանվել է նախարար-
ների հետ ունեցած իր անընդհատ կոնֆլիկտի
հետեանցով: Արշակունեաց հարստութեան ժա-
մանակ տիրում էր նոյն անմիաբանութիւնը
թագաւորի և նախարարների մէջ և կենտրո-
նական իշխանութեան թուլութիւնը: Միակ
քաղաքագէտ թագաւոր, պ. Գրէնի կարծիքով,
եղել է Արշակ Բ., որ հիմնել է առանձին բա-
ղաք, Արշակունեաց, և այստեղ հաւաքել բոլոր
նրանց, որոնք զոգոհ էին նախարարներից:
Բայց այդ ձեռնարկութիւնն էլ անաջողութեան
մասնակցեց կաթողիկոսի և նախարարների ընդ-
դիմութեան շնորհիւ և Արշակ Բ. Պարսկաս-
տան աքսորվելով այստեղ ինքնապաշտպանութեամբ
վերջացրեց իր կեանքը:

Վաղարշակին, որի ժամանակ հայ գրակա-
նութիւնը ծագում առաւ, պ. Գրէն համարում
է կիսապատմական, կիսաբանական անձնա-
ւորութիւն: Գրի գիւտից առաջ, դասախոսի
կարծիքով, հայերը անկասկած գրում էին հիւ-
րօզիֆներով: Ինչպէս որ Գրիտոնէութեան գե-
րական գրականութիւնը սկսեց ծաղկել Առ-
տուածաշնչի թարգմանութիւնից յետոյ, այդ-
պէս էլ Ե. դարում հայ մատենագրութիւնը
աչիքը առաւ Ս. Գրէի թարգմանութեամբ:
Ազաթանգեղոս՝ նրա կարծիքով, յոյն է եղել և
գրել է յունարէն, իսկ Մովսէս Խորենացու
պատմութիւնը ութերորդ դարի գործ է, գրուէ
այն, ինչ որ մենք ունենք այժմ:

Բագրատունեաց հարստութեան մասին էլ
համառօտ կերպով խօսելուց յետոյ, պ. դասա-
խոսը անցնում է Շահ-Աբասին, նկարագրում
է Պարսկաստանի վիճակը նրա ժամանակ և

ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՎԵՆԵՏԻԿԷՆ

Վենետիկ, օգոստոսի 5-ին

Նորընտիր պապը.—Միթիթարեանց հետ յարաբերու-
թիւնները.—Քաղաքական ձգտումը.

Երէկ, ժամը 2-ին, վենետիկեան թերթերը
երկրորդ տպագրութեամբ մը նորընտիր պա-
պին անունը իմացուցին: Վենետիկի պատրիար-
քը՝ Ճուզեբեէ (Յովսէփ) Սարթօ կարդինալը
կաթօլիկ եկեղեցին կառավարելու կոչուած է:
Մեծ գործընդուն և իրարանցում այստեղ. ամբողջ
քաղաքը տենդոտ ուրախութեան մէջ է: Պիոս
Ժ., ինչպէս կը կոչուէ նոր պապը, վենետիկեան
գաւառին գաւառն է, ծնած է Բիսեզէ, Թրէվի-
զայի մէկ թեմին մէջ, 1835 յուլիս 2-ին: Աղ-
քատ գիւղացիներու գաւառ է. իր ազգական-
ներէն շատերը սպասաւորներ են. եղբայրները,
եղբորորդիները զանազան մանր մուսնր պաշ-
տօններ ունին:

Այս ընտրութիւնը մասնաւորապէս հաճե-
լի է Միթիթարեան միաբանութեան, որուն
լաւ բարեկամն էր կարդինալ Սարթօն: Ու
կարծեմ թէ իր յառաջացմանը համար Միթի-
թարեանց ալ պարտականութիւն մը ունէր:

Տաս տարի մը առաջ վենետիկի պատրիար-
քական աթոռը երեք տարիէ ի վեր պա-
րագ կը մնար Ընտրելիները բազմաթիւ էին.
մրցումը սաստիկ: Այդ միջոցներուն Միթիթա-
րեանց Աբբան Կերիգեան Իգնատիոս արքե-
պիսկոսոսը՝ Հռոմ կերթալու ու պապին կը ներ-
կայանայ Լէոն ԺԳ. խօսելով վենետիկեան թա-
փուր աթոռին վրա, հայ եպիսկոպոսն՝ որ օ-
տարազգի մըն էր, կուզէ գիտնալ թէ ընտրե-
լիներուն մէջէն որն է արժանաւորը: Միթիթա-
րեանց Աբբան իր կարծիք կը յայտնէ, որ
Սարթօ եպիսկոպոսը առաքելի և սուրբ մարդ
մըն է, ու միանգամայն կարող վարչապէս մը:
Յաջորդ առտուն Սարթօն վենետիկի պատրիարք
անուանուած էր:

Լէոն ԺԳ. պապը արդէն քանի մը տարի ա-
ռաջ խօսքը ուղղակի Սարթօ կարդինալին
ուղղելով յայտարարած էր, թէ իր հաւանա-
կան յաջորդը ինք պիտի ըլլար: Գործովի ու ա-
ռաքելի մարդ, պապութեան արժանաւորեալ,
ըսած էր:

Բայց աւելի հին մարգարէութիւն մըն ալ
կայ, զոր Պիոս Ժ. թերեւ յիշէ: Երբ պարզ ժո-
ղովրդապետ էր, Միթիթարեան վարչապետ մը
օր մը իրեն կ'ըսէ. «դուն զի առեւնէն եպիս-
կոպոս յաջորդը ըլլաւ, ետքէն կարգիդալ, ետ-
քէն ալ պապ: Սարթօ իր անարժանաւորու-
թիւն յիշեցնելով կը ծիծաղէ: Շատ չանցած,
Միթիթարեանին գուշակութիւնը կ'իրականա-
նայ Սարթօյին եպիսկոպոսացմամբ և նոր այ-
ցելութեան մը առթիւ, հայ վարչապետը կը

յիշեցնէ, որ իր մէտ գուշակութիւններն ալ
պիտի իրականանան:

Անցեալ տարի, յուլիս ամսուն մէջ էր, որ
Սարթօ կարդինալը Ս. Ղազար եկաւ. հոն գրա-
նուեցալ. բարեկամացի դէմքով եկեղեցական
մը կը թուէր, զուարճալիս: Չեմ գիտեր թէ
աթոռը որուն վրա բազմեցաւ ճաշի առեւն,
Միթիթարեանց թանգարանը պիտի դրուի իբր
պապանիստ գահ մը:

Այս երկրորդ պապն է, որ քաղաքամամբ
կարծ ժամանակամիջոցի մը մէջ, վենետիկէն
Հռոմ կը փոխադրուի: Միւսն ալ Գրիգոր պապն
էր, որ տղայութեանը Ս. Ղազար կերթալ կը
խաղար, և քաղաք յիշատակ մը տարաւ հետը:
Առաքելի մարդու համբաւը ունի. բայց վի-
նետիկեան կղերը շատ հաշտ աչքով չէր նայեր
իւրեն, վասն զի խառնազանն մարդ ըլլալով,
ամէն տեղ կարգ կանոն դնելու ետեւ էր, ու հա-
չիւնեղուն ուշադրէր: Կը կարծուէ թէ վատիկա-
նոս գործերն ու դրամական խնդիրներն ալ
պիտի կարգադրուին լաւապէս:

Չափաւոր լատիններէն գիտցող մըն է, օտար
լեզուներու անտեղեակ. վենետիկեան շեշտով ի-
տալերէն կը խօսի: Վարպետ ու խորամանկ
մարդ մըն է իր օրովը քաղաքային ընտրու-
թիւնները կղերականներուն և չափաւորական-
ներուն նպաստաւոր եղան, վասն զի ճարպի-
կութեամբ գործեց:

Սարթօյին ընտրութիւնը ակներև ցոյց կու-
տայ, թէ Հռոմի եկեղեցին աւելի ևս ներքնա-
պէս հղորակներու պէտքը զգալի եղած է: Նա-

խորդ պապը իր ուժը գլխաւորապէս արտա-
քին քաղաքականութեան նուիրած էր. Պիոս
Ժ. կրօնական բարեկարգութեան մարդը պի-
տի ըլլայ:

Բայց այս ընտրութիւնը թուի թէ շատ հա-
ճելի ըլլալու չէ իտալական կառավարութեան:
Սարթօն անհաշտներէն էր. և երկար առեւն քե-
նով մնաց երկրին իշխանութեանը հետ. բայց
վերջերս կակուցած էր. ու իտալիոյ թագա-
ւորը, երբ երկու ամիս առաջ վենետիկ եկաւ,
արտակարգ և ուշադրաւ հիւրասիրութեամբ
պատուեց քաղաքի պատրիարքը:

Հաւանօրէն, պիտի կրկնուի Պիոս Թ.-ի և Լե-
ոն ԺԳ.-ի բողոքը ընդդէմ Հռոմի գրաւման
իտալական կառավարութեան, բայց պարզապէս
ձեռնարկութիւններ են, առանց ու ե հետե-
ւանքի: Սակայն միշտ ցաւալի երևոյթ մըն է
տեսնել իտալացիներ, որոնք թէ և պապ, բայց
իտալացի են, որ իրենց հայրենիքին միութեան
դէմը կը բողոքեն և նոյն իսկ կը մեքենային,
յանուն համամարդկային կրօնի մը: Մեծ պա-
պը ան պիտի ըլլայ, որ կատարուած, վերջա-
ցած իրողութիւնները ընդունի և իտալական
կառավարութեան հետ հաշտ ընթանայ: Բայց
այդպիսի պապի մը պէտքը օրէօր նուազ զգալի
կըլլայ. իտալական հայրենիքը միացած է, և
իտալական կառավարութիւնը այսօր ամբողջ
Եւրոպայի համակարգին ու յարգանքը կը վա-
յելէ, և զօրութիւն մըն է:

*

այդ շահին նա համեմատում է ուսաց Պետ-
րոս Մեծի հետ: Շահ-Աբբաս թիւրքերին յաղ-
թելուց յետոյ, իր երկրի սահմանները նորանց
յարձակութեան շահանքին համար, որո-
շում է աւերակ դարձնել սահմանակից երկիր-
ները՝ Հայաստանը և Վրաստանը: Գնդանի
գոյններով դասախօսը նկարագրեց այդ բանի
գաղթականութիւնը, որի ժամանակ հայ ժո-
ղովուրդը ահագին զոհեր է տուել:

Շահ-Աբբասի համակրութեան արժանացել
են միայն իտալացիները, որոնց նա յատկացել է
յատուկ գաղթական ընդհանուր մօտ և ամեն
գիւրդութիւն առել նորանց: Շահ-Աբբասի հիմ-
նական միտքն էր, առաջ պ. Գրէն, հայերի
միջոցով կապ հաստատել եւրոպական երկիր-
ներին հետ և իրօք հայերը մի ժամանակ չափ
ընդարձակ յարաբերութիւն ունենալ եւրոպայի
հետ և մտնելով էին Պարսկաստանում եւրո-
պական միտք և կարգ: Եթէ Շահ-Աբբասի յա-
ջորդները լաւ հասկանային նրա գաղափարը
և պարագաները նպատակաւոր լինէին, Պարս-
կաստանը վաղուց մտած կը լինէր եւրոպա-
կան քաղաքակրթութեան շրջանը, իտալացի
են և այլ պարսկական պատկեր հայերի ձեռքով:

Ինչ որ Շահ Աբբաս ծրագրեց, և չփոքեց,
ասաց պ. Գրէն, նոյնը պէտք է անէ ուս կա-
ռավարութիւնը: Աւելի լաւ միջոցով քան
հայերը անկարելի է գտնել, ասաց նա, ուս-
մանը քաղաքակրթութիւնը տարածելու հա-
մար Պարսկաստանում: Մեղիդներին և գե-
րմանացիներին հետ միայն հայերը կարող են
մրցել իրանց առեւտրական ընդունակութեան,
աւերական լեզուներին հետեւութեան և ամիսացու
հետ վարվել գիտնալու շնորհիւ:

Իսպանացիները ընդհանրապէս հետաքր-
քարեցան էր, թէն նրա պատմական մտքը վիճե-
լի կէտեր ունի: Դաւիթը լինէր էր Հասարակ-
այնութիւնը ծափահարեց դասախօսին:

ՀՐԴԵՆՆԵՐ ԵՒ ՅՈՏԱՆՆԵՐ ՆԱԽԱՀԱՆՔԻ- ՐՈՒՄ

Ընդհատված էի համարում թղթակցութիւն-
ներս հրդեհներէ մասին, բայց ահա երէկ,
յուլիսի 20-ի գիշերը, նորից Բալասանի նաւ-
թահանքում կարմիր աքաղաղը թափահարեց
իր թեկը: Հրդեհը սկսվում է դարձաւ Փի-
թեովի № 50 հողաբաժնի № 28 դէն գցած
նաւթահորից և տարածվում միւս քանդակով և
քաղվող հորերի վրա: Սուղոյները ուշ գիշե-
րին տաքի են կանգնեցնում հողաբաժնի բո-
լոր բնակիչներին, սկսվում է սովորական ի-
րարանցումը և վախատումը, կանանց ու երե-
խաների գոռոտ-գոչումը: Դրանց շտապում
են ամենից առաջ տեղափոխել անվտանգ տեղեր
և հանգստացնել, ապա ընկնել, ինչպէս ասում
են, հրդեհի ջանքին:

Մինչ այդ, կրակի բոցերը արդէն փաթաթ-
վել էին մի քանի վիշակների և բռնկեցին մի
րեգերիւնուար, որի պայթիւնը կատարեալ է
դարձնում սկսած վախտումը: Կրակը անց-
նում է հարկան Աստրախանեան, Սաբունյեան
ընկերութիւնների և Բուշիլիի նաւթահան-
քերը և բռնկում նաև վերջինի մի ռեգերիւնուար:
Հնար եղածին չափ միջոցներ են ձեռք առնում
ազատել դեռ չը բռնկված վիշակները և բնա-
կութեան շինութիւնները, բայց, ինչպէս միշտ,
հակահրդէլային գործիքներ են ձեռք բացակա-
յութեան պատճառով: Այդ ուղղութեամբ աշ-
խատանքը, ջանքերը կամ ոչ մի արդիւնք չեն
տալիս, կամ թէ չէ չափ անհաշիւ արդիւնք:
Կրակի բոցերը սառնանում են իրանց թեկը
ահագին տարածութեան վրա և լուսաւորում
գիշերվայ մութ ու խորհրդաւոր խաւարը:

Տրաքվում է Փիթեովի երկրորդ ռեգերիւնուարը
և ծխի թանձր ամպերը մի անժամանակ ծած-
կում են կրակի բոցերը՝ որպէս զի նորից երևան
գան աւելի պայծառ և աչք ծակող ոյժով: Ի-
րարանցումը քանի գնում սաստկանում է,
ժողովում են հարկան հանքերի կառավարիչ-
ները, օգնող բանտորներ իրանց բաներով ու
բրիչներով և օգնում է մի անհաշիւ աշխա-
տանք: Գիշերվայ ծոյլ և թմրած խաւարը
տեղի է տալիս չարածիւր և անհանգիստ լոյ-
սին, որը մի անտակ արհամարհանքով է նա-
յուս գիշերվայ անսպասելի իրականութեանը,
որը արհամարհան կերպով լուսաւորել է իրան
խնամակարութեան յանձնած երկրի մի կտորը:

Առաւօտեան դէմ արդէն հրդեհը հանգել էր՝
կլանելով ընդամենը 18 վիշակ: Փիթեովից—
7, Բուշիլից—1, Սաբունյեան ընկ.—6 և Աս-
րախանեան ընկ.—4:

Յուլիսի 31-ին արդէն փայտեղէն էին կը-
րում: Այդպէս վիշակները նորերով փոխարի-
նելու:

Բիրի-Էյրաթի նաւթահանքի ընկերու-
թեան ֆոնդանը դեռ չարժեւորվում է այդ-
վել: Վերջին օրերս ֆոնդանի ոյժը ընչ պակա-
սել է: Օրական մօտ 100,000 պոնդ նաւթ
տուող ֆոնդան է խփում և Բիրի-Էյրաթի
Ջուրալովի նաւթահանքում, նոյնպիսի մէկն
էլ—Ռամանի, Մուսա-Նադիբի նաւթահան-
քում: Գլխաւորապէս շնորհիւ այդ ֆոնդան-
ներին, ահա մօտ մի շարքով է, ինչ բարայում
նաւթի վաճառք տեղի չէ ունեցել և միայն մի
քանի վաճառք՝ նաւթային միացորդներին
և կերութիւն Օրեք էին լինում, որ ոչ մի վա-
ճառք որ և է արդիւնքից տեղի չէր ունենում:
Հանքերում տարօրինակ կենդանութիւն, բո-
սայում անօրինակ մեռելութիւն:

Ստատիստ

Բազու

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Խ Ե

Եմենցի. Հերոսը. Ֆրանսերէնից թարգմանեց
Կարենի. 31 եր. գինը 20 ասնիւն:

Եմենցի, ապրիլ ու մեռնիլ—գա մի ընդհա-
նուր օրէ՛ք և կենդանական աշխարհում: Բայց
երբ մարդկային մահը չաղկապվում է արտա-
կարգ երեւոյթների հետ, երբ նա առաջ է դա-
նիս իբրեւ հետեւանք վեհ ձգտումների, գաղա-
փարական գործերի—այս ժամանակ բարգաւա-
նաւորութիւն է ստանում և անհրաժեշտ յիշու-
թիւն թողնում պատմութեան էջերում:

Գործը հերոսացնում է մարդկանց, իսկ հե-
րոսութիւնը անմահացնում է նրանց: Աշխար-
հում ամեն օր, ամեն րօպէ հարկերնեով ու
հաղթարկով մարդիկ են մեռնում, բայց անա-
յառ պատմութիւնը միայն սակաւութիւն ընտ-
րեալներին է իր գրկին ընդունում, նրանց
անուններն է իր էջերում պահում և պերճա-
յառ լեզուով սերունդից սերունդ աւանդում:
Անցնում են տարիներ, գլորվում են դարեր,
բայց նրա շնորհիւ մի ժամանա դՄար, մի Մա-
ձինի, Գորիքալդի և այլ հերոսներ միշտ կեն-
դանի են մնում մարդկանց յիշողութեան մէջ:

Ազգերից իւրաքանչիւրն իր պատմական
կենսի ընթացքում այդպիսի հերոսների ամ-
բողջ շարքեր է առաջացրել, սակայն վերջին
XIX-րորդ դարի ընթացքում ամենից շատ
թիւրքահայապետի լորտաւորնայ ազգերն են աչքի
ընկել այդ բանում, որովհետեւ ամենից շատ
նրանք են ծնվել, հալածվել և ազատագրական
կռիւ մղել: Յունական «կլեֆտ» ու արաբա-
լը», սերբական «հւնակը», բուլղարական «հայ-
դուկը», մակեդոնական «չետնիկը»—(հրոսակը)
—որպէս ըստիւն էլ հերոսական տառններ են,
որ ստացել են ազգի անհնազանդ գաւառները
իրանց գործերի համար:

Ահա մի այդպիսի հերոս գաւառի պատմու-
թիւնն է անում Եւրօպայի հայ ուսանողութեան
միութեանը՝ հրատարակութեամբ լոյս տեսած
Ներկայ գրքովը: Կացանտոնիս է այդ հերոսի
անունը, ազգով յոյս: Թիւրքական անվերջ հա-
լածանքը լցնում է նրա համբերութեան բա-
ժակը և նա որոշում է թողնել խաղաղ կենու-
քը և «կլեֆտ» դառնալ:—Մայր իմ, ասում է
նա, չեմ կրնար ծառայել թուրքերուն, իսկ,
անկարող եմ ես ասոր, սիրտս կարծնի: Պիտի
առնել հրացանս, պիտի երթամ և կլեֆտ պի-
տի դառնամ: Լեռներուն մէջ արհեստաւոր
սարերը պիտի բնակիմ: Իբրեւ հիւրընկալ՝ պիտի
ունենամ ես հաստատուն ծառերը, իբրեւ բա-
րեկամ՝ գայլերը, իբրեւ ծածկ՝ ձիւնը և իբրեւ
անկողին՝ անգունգները: Պիտի երթամ, մայր
իմ, մի լար, այլ զո օրհնութիւնդ տուր ինձ:

Եւ նա գնում է: Կացանտոնիս անունը շու-
տով հերոսական հռչակ է ստանում, ահ ու
սարափ է տարածում թիւրքերի մէջ և յոյս
ներշնչում յոյներին: Նա կուռն է մինչև իր
կենսի վերջը, շատ քաջագործութիւններ է
կատարում, շատ մեծ անուն է հանում և վերջն
ընկնում է սարսափելի տանջանքներով մահա-
ցած: Սակայն նրա յիշատակն անմահ է մնում
և նրա գործերի պատմութիւնը յետագայ սե-
րունդներին մնցնում:

Ե. Թ.

Նոր ստացված գրքեր. Գ. Լուկինեան
«Նոր բառարան-ֆրանսա-հայ» հատ. II. Ե.—Հ.
գինը 2 հատորի համար 25 ֆրանկ: Յ. Ծար-
բար «Բրիտանիկական արշալոյսին» թարգ.
Միխայիլ Կար. 708 եր. գինը—2 ր. 50 կոպ.
Պրէս Բուշիլի «Պատմութիւն» 135 եր. գինը 25
կոպ.: Աւարի. «Գերբնական հիւանդութիւն»
25 եր. գինը 20 կոպ.: Միսաք Տէլ-Միքայէ-
լեան «Պատմական խնկարկունք» 44 եր. գինը
փարա՛ Մ. Գորկիի «Մեքեր», թարգ. Թ. Ստե-
փանեան, 18 եր. գինը 5 կոպ.: Տ. Նաւասար-
դեան «Հայ ժողովրդական հեքիաթներ» X-րորդ
գիրք, 96 եր. գինը 50 կոպ.: Ե. Տուր. «Մար-
գարեթ Մանակ», 47 եր. գինը 10 կոպ. Ան-

տոն Մայիլեան. «Արմէն» վէպիկ, 96 եր., գինը
25 կոպ.: Մաքսիմ Գորկի. «26 տղամարդ և 1
աղջիկ», թարգ. Սուլէ վարդ. 32 եր. գինը 5
կոպ.: В. И. Тьёбо; «Замѣтки дореволюціон-
практика» 63 стр. 50 коп.: Տիգրան Նաւա-
սարդեան. «Բառարան Արարատեան բարբառի»
132 եր. գինը 50 կոպ. Ար. Սան. «ԱՌմն է
իրաւունք—կարեւորական խնդիր» 22 եր.,
գինը է 10 կոպ. Մակար Եպ. Բարխուդարեան.
«Պատմութիւն Աղուանից», հատ. II. 224 եր.
գինը 1 ր. 30 կոպ., Թ. Նալբանդ «Մաֆի» 24
եր. գինը 10 կոպ. Մ. Շուտ. «Մերանցում
անուրջներ» 46 եր. գինը 25 կոպ.: Victor
Thiébaud «La Crise Viticole et l'extension des
vignobles en Russie» 101 p. prix 2 fr. Վա-
հան Թաւադեան «Բանաստեղծութիւններ»
107 եր. գինը 50 կոպ. Ա. Թաւահան. «Բա-
նաստեղծութիւններ» 136 եր. գինը 1 րուբլի:
«Բանքեր գրականութեան և արուեստի գիրք
Ա. խմբ. Ն. Աղոնց, հրատ. Ա. Մեխիւեան, 2
գիրքը միասին 4 րուբլի Եւրօպ. հայ ուսանող.
միութեան հրատարակութիւնները՝ 1) Գաւառ
Քաթիպա՝ «Ազատութեան երգեր», 2) «Ազա-
տամի Ստուգ», 3) Միք. Նալբանդեան «Հայ-
րենասէրի տաղեր», 4) «Հայոհիւններ», 5)
«Հերոսը»—իրաւագրութիւն գինը 20 ասնիւն:
6) A. Wandal: «Les Arméniens et la reforme
de la Turquie» 40 p. prix—0,50 fr. 7) G.
Brandes: «Armenien und Europa» 24 s.—8)
G. Brandes: «Armenie et l'Europe» p. 24,
prix. fr. 0,40. 9) Ed. Bernstein: «Les Souff-
rances du peuple arménien et le devoir de
l'Europe» p. 40, prix 40 cent. 10) «Für Ar-
menien und Macedonien» 77 S.—60 cent.
ԲՅՈՒ. Վահան Արծրունի «Աղջիկ»—առողջապա-
կան և բարոյագրական էփրէ՛ 224 եր. գինը
60 կոպ. М. Шахтатинский «Прифл. Мо-
хаммедь Ага» 15 стр. 50 коп. Ա. Ալթու-
նեան, «Աղբատին պատեր», իրական վէպ.
Բաֆի «Մինի» վրացերէն թարգմ. Բ. Նաւա-
գուրդի, հեղինակի պատկերով, գինը 1 ր.:
Պրէս. Դոք. Յիւստոյ. «Աւաւիներ և նրանց
հեղաշրջութիւնը», վրացերէն թարգմ. Ատամ-
նաբայ Ի. Տ. Ախալցիքիովի, 7 պատկերնե-
րով, գինը 40 կոպ.:

ՆԱՄԱԿ ՎԱՊԱՐՇԱՊԱՍԻՑ

Յուլիսի 30-ին

Ուրախութեամբ կարող եմք հաղորդել, որ
այսօր էլ միայն մէջ կարեւոր դասակց երեւին
միաբանական ժողով կազմել, հրաւիրելով նաև
թեմական առաջնորդներին և փոխառնորդներին
զանազան խնդիրներ պարզաբանելու համար:
Եւ այսօր այդ մտքով հրաւիր եղած մի քանի
սին. Ընդհանուր խորհրդակցութիւնը առհասա-
րակ և ամեն խնդրում այն նշանակութիւն
ունի, որ մտքերի փոխանակութեամբ և միա-
բան և համարաշխ գործակցութեամբ կարելի է
մեր շատ հարցերին օրինաւոր ընթացք տալ,
կոնֆաւորական և այլ գործադրութիւններին
միաձուլութիւն և արագընթացութիւն տալ:
Մինչդեռ դրանց զէմ յաճախ լուրջ են բողոք-
ներ ու տրաւանջներ: Իւրաքանչիւր առաջնորդ
կամ նախաձեռն յաճախ առաջնորդում է իր
անհատական հակադրութեամբ կամ հայեցա-
կետով, մինչդեռ այդ առաջնորդներն և նախա-
գամները շուտ շուտ միմեանց պատահելով, մի-
մեանց հետ մտքեր փոխանակելով և վերջապէս
ապրելով տարբեր տեղեր, տարբեր ժողովուրդ-
ների մէջ, իրանց տեղեկութիւններով և գործ-
նական կենսի մէջ ունեցած անհասկան փո-
քերով կարող էին մէկ միւսի թեքութիւնները
լրացնել: Այս անտակնեղից ցանկալի էր և նոյն
իսկ անհրաժեշտ, որ իւրաքանչիւր առաջնորդ
կամ փոխառնորդ իր հետ բերէր նաև այն բոլոր
տեղեկութիւններն ու կարծիքները, որոնք կա-
րող էին օրպէս ընդհանրութեան ցանկութիւն,
գործին նպաստաւոր հանդիսանալ:

Այս տարի էլ միայն մի և նրա ջրկանների
դաշտային բերքերը խոստանում են մեծ առա-
տուութիւն: Յորենի հունձը առատ էր, թէն դեռ
ևս կալսելը չէ վերջացել: Բամբակի ցանքերը
մինչև այժմ աճել են աջող պայմանների մէջ:
խաղողի բերքը, որ պակաս տեղ չէ թողել
Այս տարի սովորականի պէս թէն չի կրիքը
չափ մեծ էր, բայց չը պէտք է այնքան անզոհ
լինել: Մէջ ընդ մէջ անպակաս և եղել անձրևը,
թէն բամբակի համար անհրաժեշտ է բացի
անձրևներից նաև առատ ջուր: Յուլիսի 27-ին,
կիրակի օրը, առատ անձրև գեղեցիկ կերպով
յառեցրեց բամբակի ցանքերը:

Տ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Միւլախ, յուլիսի 29-ին
«Միւլախ» 153-րդ համարում տպված էր Մըդ-
նախից մի նամակ, որի մէջ ասված է թէ՛ հա-
սարակութիւնը գոյնը լինելով ինձանից՝ իմ
զէմ բողոք է ուղարկել կոնֆաւորականին,
խնդրելով հեռացնել ինձ գործակալութիւնից:
Դեռ ես պարտք եմ համարում յայտնել որ,
երբ կոնֆաւորական ինձ առաջարկեց այս պաշ-

տանք, ես չընդունեցի և հրաժարական մատու-
ցի, բայց կրկնակի հրամանին անյարմար հա-
մարեցի ընդդիմանալ: Ինձ լաւ յայտնի էր այս-
տեղ բուն դրած մի խումբ դատարկաշրջիկնե-
րի բնաւորութիւնը, որոնք խաբարում են մի որ
և իցէ խանութ, կամ նստում «Բուլվար» կոչված
տեղում և սկսում են բամբակ, դասել ու
դատապարտել անց ու դարձ անողներին: Եւ
ահա այն բողոքը, որ ուղարկված է այստեղից,
հեղինակած է յիշեալ «ազնիւններից», որ խա-
նութ խանութի մաս են հանել (որ հակառակ
է օրէնքին) և հայերէն լեզուից գոյնը ծխական-
ներին հաւատացրել են, թէ՛ խնդրել երեցփո-
խին իր պաշտօնում վերադառնալու համար մա-
սին է: Տեղեկանալով այդ բողոքի մասին՝ բնա-
կան է, որ հրաժարական մատուցի:

Ինչ վերաբերում է այն հարցին, որ պ. Մով-
սիսեանը թոյլ է տուել իմ առաջարկները եկե-
ղեցական հաշիւատեսները ստանալու վերա-
բերութեամբ և ես իբր զանցառութեամբ չեմ
կազմել ժողով երեցփոխական հայերէնը ըն-
նելու, նամակագիրը այս տողերը այնպիսի մի
չեղտով է գրում, որ կարծես թէ նոր Ամերիկա է
գտել: Ողորմելի չէ հակախուստ, որ ինչպէս
յայտնել եմ իր ժամանակին ժողովին նոյն երեց-
փոխի ներկայութեամբ, երեցփոխները պարտա-
կան են օրէնքի 1232 յօդ. համաձայն, իրանց հա-
շիւները առաջարկել նախ ծխական ժողովին ի
զինութիւն և ապա յունվար ամսին գործակա-
լին:

Ուրեմն ինչ զարմանք, եթէ ես պահանջել և
ստացել եմ եկեղեցական հաշիւատեսները:
Իսկ եթէ երեցփոխը զանցառութեան է տուել
կոնֆաւորական հրամանը և հայիւր իր ժամա-
նակին չէ առաջարկել ծխականներին՝ այդ իր
գործն է, որի մէջ ինձ է մեղաւոր հատա-
կում: Այս պարզ ճշմարտութիւնը հասկանալ
են բոլոր գիւղերի երեցփոխները և այնպէս էլ
վարվում են: Բացի այն, որ գործակալի համար
դժուար է ամբողջ վիճակի գիւղերը չընել և
հարկաւոր պիտանքը չափիլով ու երեցփոխ-
ներից հայիւները առնելու համար ծխական ժո-
ղովներ կազմել, օրէնքն էլ նրա վրա ամենե-
ւին չէ դնում այդ պարտքը... Մեր երեցփոխը
իր պաշտօնավարութեան օրից եկեղեցին էլ չէ
յաճախել, չէ հետեւել եկեղեցու բարեգործու-
թեանը ու եկեղեցին, փոխանակ չեղանալով՝
նսեմանում է: Երևի սրա մէջն էլ ուրիշներն
են մեղաւոր...

Արշակ քահ. Տէր-Ստեփանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԸ

Անդրկովկասեան երկաթուղու Սաղէվախօ
կայարանում, յուլիսի 31-ին, ցերեկվայ 1 ժամ
30 րոպէին, տեղի ունեցաւ մարդատար գնաց-
քի խորտակում: Սառակի ֆուսված են չորե-
մեքենան և ծանրոցի վագոնը, իսկ III կլասի
պագոններից երկուսը ստացել են թեկն շինա-
սերս: Վիրաւորված են կոնդուկտոր Բէրէժիա-
նի, մեքենավարի օգնական Բոգոյցիկ և երեք
ճանապարհորդներ: Վնասված գնացքը Քիֆլիս
հասաւ 5 ժամ: Նշանակած ժամանակից ուշ
Խորտակման պատճառը, ասում են, երկաթու-
ղիական ուղղի օխալ դրուածքն էր:

Պետերբուրգից ստացված տեղեկութիւննե-
րին նայելով, Կախէթի երկաթուղային գծի
շինութիւնը կը կատարվի պետական գանձա-
րանի հաշով: Մտադրութիւն կայ շինութիւնը
սկսել առաջիկայ 1904 թականից:

Ալեքսանդր Թարխանեանի սպանութեան
մասին մեզ հաղորդում են հետեւեալ մանրա-
մասնութիւնները: Մի քանի ժամանակ առաջ
գործադրանաւոր Խաչատրեանց ստանում է ան-
յայտ անձները մի նամակ, որով նրանից պա-
հանջվում է վճարել 15,000 րուբլի: Նամակում
գումարի վճարման ժամանակամիջոց նշանակ-
ված է լինում երկու շաբաթ: Խաչատրեանց չէ
վճարում գումարը և ահա 14-րդ օրը մի երե-
կայ բերում է մի այլ նամակ և յանձնում Ա-
լեքսանդր Թարխանեանին, որ ծառայում էր
Խաչատրեանի մօտ, որպէս նրա գրասենյակի
կառավարի: Թարխանեան իմաց է տալիս այդ
մասին իշխանութեան, որ և ձերբակալում ու
բանտարկում է երեսային Նամակ ուղարկող
անձինքը դիմում են Թարխանեանին մի նոր
նամակով և պահանջում նրանից, նախ ազատել
բանտից երեսային և ապա վճարել պահանջված
գումարը: Թարխանեան պատասխանում է նը-
րանց չափազանց վերաւորական ոճով: Հետե-
ւանք լինում է յայտնի սպանութիւնը, որ
տեղի է ունենում նոյն օրը:

«Нов. Обозр.» լրագրում կարդում ենք.
«Երկրագործութեան և պետական կալուածնե-
րի Կովկասեան լրագրը առաջնորդեց Երեւա-
նեան նահանգի և Կարեի չընդի պետական
կալուածների կառավարչին տեղեկութիւններ
հաղորդել իրան Ալե

2—7